Դեկտեմբերի 6-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 11 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի «Տարոն-3» թաղամասում կիսակառույց շենքի վերակառուցում» ծրագիրը.

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքում ֆուտբոլի խաղադաշտի կառուցում» ծրագիրը.

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ», «Կրթավճարներ», «Բարեգործական ճաշարաններ» և «Հայաստանի հայրազուրկ երեխաների օգնություն» ծրագրերը.

«Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հատուկ կարիքներով երեխաների դպրոցական պայմանների բարելավում» ծրագիրը.

«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագիրը.

«Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մարդասիրական օգնություն Գյումրու ժամանակավոր կացարաններում բնակվող անապահով ընտանիքներին» ծրագիրը.

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից իրականացվող «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագիրը.

«Նոր Բայազետ» զարգացման համայնքային բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակի վերակառուցում» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: